ԱՄՓՈՓԱԹԵՐԹ

«Բարեգործության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն և լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագծի (Կ-330-11.06.2018-ԱՍ-011/0) վերաբերյալ ներկայացված առաջարկների

N	Առաջարկության (փոփոխության, լրացման) հեղինակը	Հոդվածը, կետը, որին վերաբերում է առաջարկությունը	Առաջարկությունը (փոփոխությունը, լրացումը)	Առաջարկության վերաբերյալ հեղինակի (հիմնական զեկուցողի) եզրակացությունը	Առաջարկությունն ընդունելու կամ մերժելու վերաբերյալ հանձնաժողովի որոշումը
1.	**Ազգային ժողովի պատգամավոր Միքայել Մելքումյան**	«Բարեգործության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն և լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագիծ	Առաջարկվում է «Բարեգործության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն և լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագիծը լրամշակել այնպես, որ լիազորված մարմինը «Բարեգործության մասին» օրենքով սահմանված իր լիազորություններն իրականացնի որպես բարեգործական որակված ծրագրերի շրջանակներում: Իսկ ծրագիրը բարեգործական որակելու հարցին անդրադառնա այն դեպքում, երբ ծրագիրն իրականացնող անձը՝ 1) ակնկալում է ժ օրենքի 15-րդ հոդվածով նախատեսված խրախուսում. 2) օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի հիման վրա նախատեսում է ծրագրի շրջանակներում օրենքով սահմանված կարգով օգտվել հարկերի, տուրքերի, պարտադիր վճարների գծով օրենքով սահմանված արտոնություններից, եթե նշված արտոնությունները կամ վերը նշված որակումն ուղղակիորեն չեն բխում	Նախագծում կատարվել է համապատասխան փոփոխություն:	**Ընդունվել է**

			օրենսդրությունից կամ Հայաստանի Հանրապետության վավերացրած միջազգային պայմանագրից. 3) օրենքի 16-րդ հոդվածի 2-րդ մասի հիման վրա ակնկալում է Կառավարությունից կամ համապատասխան համայնքից ստանալ նյութատեխնիկական աջակցություն կամ դրամական օժանդակություն:		
2.	**Կառավարություն**	«Բարեգործության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն և լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագիծ	Առաջարկվում է «Բարեգործության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն և լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագծի հետ քննարկել «Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքում փոփոխություններ կատարելու մասին» օրենքի նախագիծը, որով նախատեսվում է ՀՀ հարկային օրենսգրքի 172-րդ և 191-րդ հոդվածներում «Կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի» բառերը փոխարինել «լիազորված մարմնի» բառերով՝ հաշվի առնելով, որ Կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը «Բարեգործության մասին» օրենքի իմաստով չի հանդիսանում լիազոր մարմին:	Կատարվել է համապատասխան փոփոխություն:	**Ընդունվել է**